



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

<< 26 >> ապրիլ 2017թ  
ք. Եղեգնաձոր

N 38

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի ապրիլի 14-ի N316-Ա որոշումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակը լրացնել հետևյալ նոր պաշտոններով՝

1) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (ծածակագիր՝ 69-2.2-23)>>.

2) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (ծածակագիր՝ 69-2.3-19)>>


3) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ (ծածակագիր՝ 69-3.2-25)>>

2. Ուժը կորցրած ճանաչելի հետևյալ պաշտոնները՝

1) «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ (ծածակագիր՝ 69-2.3-17) >>:

2) «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ (ծածակագիր՝ 69-3.2-23) >>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ.ՍԱՐԳՍՅԱՆ